

## ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Աննա Հրանտի Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» >> ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Հաշվի առնելով ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման նպատակով կատարվող գործուն քայլերը, կրթական քաղաքականության և գաղափարական փոփոխությունների ընթացքը՝ կարող ենք ասել, որ խոսքի, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման գործընթացները որոշիչ նշանակություն են ձեռք բերել արդի կրթական գործընթացների արդյունավետ իրացման համար: Միաժամանակ պետք է ասել, որ սույն համակարգում ներդրված աջակցման գործընթացները, որի մաս է կազմում լոգոպեդական գնահատումը, դեռևս այժմ է ընկնում անկատարությամբ, տեսանելի բացթողումներով, ինչը լուրջ մարտահավեր է նետում թե՛ ՏՄԱԿ-ների, թե՛ ՀՄԿ-ի, թե՛ հաստատությունների մակարդակում ներդրվող աջակցման գործընթացների կազմակերպման և կառավարման պատասխանատուներին և սույն համակարգերից դուրս աշխատող մյուս մասնագետներին: Հաշվի առնելով ասվածը՝ Ա. Հ. Ասլանյանի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքը համարում ենք պահանջված, ժամանակահունչ և հրատապ, քանի որ բազմաթիվ տեսագործական փաստեր կան առ այն, որ լոգոպեդական գնահատման մոդելավորման բացակայության պայմաններում կրթական գործընթացներում խիստ տեսանելի և անհաղթահարելի խոչընդոտներ են ի հայտ գալիս, որոնք բացասաբար են անդրադառնում հաստատություններում աշխատող մանկավարժների, մասնագետների, ինչպես նաև խոսքի խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքների կողմից իրականացվող շտկողադաստիարակչական գործունեության

վրա [Վ. Ա. Կայլագին՝ 2013, Օ.Ա. Կոզիրովա՝ 2014, Ք.Մ. Մորիլա, Ք.Մ. Քալդաս, Ք.Ա. Սքարպեյին, Պ.Լ. Սանթոս՝ 2017 և այլք]: Այս մասին է վկայում նաև ատենախոսի այն նկատառումը, որ կրթական բարեփոխումների շրջանակներում, տարածքային մակարդակի գնահատման առումով, լոգոպեդական գնահատման (ախտորոշման) գործընթացում առաջանում են որոշակի խնդիրներ, քանի որ գնահատման այսպիսի գործընթացի հիմքում այս ժամանակաշրջանում հաշվի են առնվում ֆունկցիաների հինգ (ներկայումս՝ 8) հիմնական խանգարումներ՝ ծայնի և խոսքի, լսողության, տեսողության, ինտելեկտուալ (մտավոր), շարժողական (<< կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրաման, Ձև 4): Մինչդեռ, ինչպես հաստատում են տեսագործական փաստերը, Ֆունկցիայի խանգարումների վրա հիմնված նման դասակարգումը չի կարող հիմք հանդիսանալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տևողության և ծավալների որոշման համար, քանի որ ֆունկցիայի գնահատումը ինքնին բժշկական գործընթաց է, որը ենթադրում է նեղ մասնագիտական միջամտություն: Կարևորում ենք այն հանգամանքը, որ Ա.Հ. Ասլանյանը երեխայի խոսքային խնդիրների հետ կապված հարցերում, խոսքի խանգարման տեսակն ու աստիճանը որոշելու համար առաջնահերթություն է համարել հենց լոգոպեդական գնահատումը: Եվ արդարացված է ատենախոսի այն հիմնավորումը, որ խոսքի խանգարումների և խոսքային խնդիրների գնահատումը պետք է իրականացնել լոգոպեդական գնահատման ճանապարհով՝ մասնավորապես լոգոպեդի կողմից: Ա.Հ. Ասլանյանը խոսքային խանգարումների հետազոտումը դիտարկելով լոգոպեդական աշխատանքի կազմակերպման կարևորագույն նախապայման՝ էլ ավելի է ընդգծում լոգոպեդական աշխատանքի արդյունավետության և գնահատման գործընթացի միջև առկա փոխգործուն կապի կարևորությունը: Ներկայացված հետազոտությունների փաստացի տվյալների վերլուծության հիմքով ատենախոսը պնդում է, որ գոյություն ունեցող գիտական ուսումնասիրությունները, որոնք ուղղված են խոսքի

հետազոտման կազմակերպմանը՝ ըստ ֆունկցիոնալ գնահատման առանձնահատկությունների, լիովին չեն բավարարում խոսքային խանգարումների ախտորոշման, այնուհետև՝ վերջինիս հիման վրա կազմակերպվող լոգոպեդական աշխատանքի առջև ծառայող շտկողական պահանջները: Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք ասել, որ ատենախոսին հաջողվել է հիմնավորել «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով ատենախոսական աշխատանքի արդիականությունը: Ներկայացված գիտահետազոտական աշխատանքի վերլուծությունը նաև ցույց է տվել, որ Ա.Հ. Ասլանյանին հաջողվել է մշակել և պատշաճ գիտական ոճով ներկայացնել հետազոտության գիտական կառուցվածքը:

Ելնելով թեմայի արդիականությունից՝ նա հետազոտության **նպատակ է համարել** տարածքային կենտրոններում կիրառվող լոգոպեդական գնահատման համակարգային մոդելի մշակումը՝ հիմքում դնելով ֆունկցիոնալ գնահատման հարաչափերի վերանայումը: Սույնով Ա.Հ. Ասլանյանն, ըստ մեզ, լոգոպեդական գնահատման մոդելի մշակումը կառուցելով ֆունկցիոնալության արդի գնահատման համակարգերի հիման վրա, սկիզբ է դրել լոգոպեդական գնահատման մի նոր՝ արդիականացված մոտեցման, որը ոչ միայն լոգոպեդական գնահատման գործընթացը չի առանձնացնում ֆունկցիոնալության գնահատման հայեցակարգից, այլ լրացնում է վերջինիս՝ դարձնելով այն առավել կատարելագործված: Պետք է ասել, որ առաջադրված նպատակից բխած խնդիրները ատենախոսը ներկայացրել է բարձր մակարդակով, աստիճանականության սկզբունքով, որոնց իրականացման համար ընտրել է հետազոտության **համապատասխան մեթոդներ**:

Ելնելով ուսումնասիրվող հիմնահարցի խնդրո առարկայից՝ ատենախոսը հետազոտության **օբյեկտ է** դիտել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տարածքային մակարդակում իրականացվող լոգոպեդական գնահատման կազմակերպման և անցկացման գործընթացը, իսկ հետազոտության առարկա է համարել լոգոպեդական գնահատման իրականացման

միջոցներն ու մեթոդները՝ ըստ անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների:

Մեր կողմից առավել հետաքրքրական է համարվել Ա. Հ. Ասլանյանի կողմից ձևակերպված վարկածը, որի համաձայն խոսքի գնահատման գործընթացում կիրառվող մոդելը տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում կարող է առավել արդյունավետ կիրառվել, եթե՝ ԱՀԿ կողմից ընդունված՝ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (ՖՄԴ-ԵԵ) իրականացվող գնահատման գործընթացը ներառի խոսքային խանգարումների դասակարգման ընդհանուր չափանիշներ, ինչպես նաև կրթական հաստատություններում իրականացվող խոսքային խանգարումների հաղթահարման գործընթացը կազմակերպվի՝ ըստ խոսքի գնահատման հստակ, ստույգ ձևակերպված բնութագրիչներ և որակիչներ պարունակող մոդելի:

Աշխատանքի վերլուծական տվյալների համաձայն՝ հետազոտության **գիտական նորույթը** սահմանվել է չորս ուղղությամբ. դրանցում առանձնապես արժևորում ենք այն, որ առաջին անգամ սահմանվել է լոգոպեդական գնահատման մոդելավորման նպատակով կիրառվող մեթոդական ուղեցույցի հիմանական բովանդակությունը, ուղղվածությունը, բնույթը՝ խոսքի գնահատման գործընթացում, մշակվել է խոսքի գնահատման համակարգային մոդել՝ կրթական հաստատություններում իրականացվող խոսքի գնահատման հստակ և ստույգ ձևակերպված բնութագրիչների և որակիչների ներկայացմամբ:

Այսպիսով, կատարված գիտահետազոտական աշխատանքի վերլուծությունը թույլ է տալիս հաստատել, որ այն կառուցված է համապատասխան և արդիական **մեթոդաբանության** հիման վրա և ունի տեսագործնական կարևոր նշանակություն, ինչը աստենախոսին հաջողվել է հստակ և գրագետ ներկայացնել գիտական ապարատի համապատասխան բաժնում: Առանձնակի կարևորում ենք հետազոտության գործնական նշանակությունը, քանի որ կուտակված գործնական

Նյութերն ու արձանագրված արդյունքները հագեցած են ֆունկցիոնալ գնահատման սահմանված որակիչների և ստույգ ձևակերպված բնութագրիչների կիրառման մեթոդական ցուցումներով, հանձնարարություններով, որոնք էլ հենց ամփոփ ներկայացնում են լոգոպեդական գնահատման նպատակով կիրառվող խոսքի հետազոտության համակարգային մոդելը: Բացի այդ, ատենախոսության նյութերը կարող են գործածվել ՀՀ ՏՄԱԿ-ների, հանրակրթական դպրոցների մանկավարժական անձնակազմերի կողմից՝ լոգոպեդական գնահատման կազմակերպման ու անցկացման նպատակով: Հետազոտության հիմնադրույթները, հետևությունները և արդյունքները՝ մասնագիտական սեմինարների, վերապատրաստման և դասախոսությունների մշակման նպատակով, կարող են հիմք հանդիսանալ ինչպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսների, այնպես էլ մագիստրոսների կողմից իրականացվող նոր հետազոտությունների և գործնական փորձի ներդրման համար:

Այսպիսով, Ա . Հ . Ասլանյանը **հետազոտության առաջին գլխում** բացահայտելով հետազոտվող հիմնահարցի տեսական դրվածքը՝ նախ և առաջ խոր անդրադարձ է կատարել կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, գնահատման գործընթացում Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչների կիրառման ուսումնասիրության, լոգոպեդական գնահատման գործընթացներում խոսքային խանգարումներ ունեցող սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկություններին վերաբերող հարցերին: Սույն հանգամանքը ուշագրավ է, քանի որ ատենախոսը հետազոտվող խնդրո առարկայի տեսական դրվածքի բացահայտման հիմքում նախ և առաջ դրել է արդի կրթության իրավասրենսդրական հիմքերը, որոնք թույլ են տալիս ուսումնասիրվող լոգոպեդական հիմնախնդիրը դիտարկել ժամանակակից կրթական մոդելի պայմաններում: Նման մոտեցումը հնարավորություն է ստեղծում

հետազոտվող հիմնահարցը դիտարկել ֆունցիոնալ գնահատման համատեքստում, այլապես այն կարող էր անջատ լինել արդի կրթական իրականությունից: Այսպիսով՝ վելուծելով շուրջ 183 անուն գիտամեթոդական աղբյուրներ և մասնագիտական գրականություն (այդ թվում նաև էլեկտրոնային աղբյուրներ) ատենախոսը հիմնավորապես ցույց է տվել լոգոպեդական գնահատման արդի դրվածքը ժամանակակից մանկավարժության մեջ: Սույն գլխում Ա.Հ. Ասլանյանը վեր է լուծել նաև լոգոպեդական գնահատման և ծառայությունների տրամադրման գործընթացները, որոնցում հստակ մեկնաբանել է այն հարցերը, որոնք վերաբերել են հանրակրթական դպրոցների լոգոպեդական աշխատանքների դրվածքին, ՏՄԱԿ-ներում իրականացվող լոգոպեդական գնահատման առանձնահատկություններին և այն օբյեկտիվ խոչընդոտներին, որոնք ընկած են սույն գործընթացների կայացման հիմքում: Կատարված վելուծությունների արդյունքում ատենախոսը բացահայտել է, որ լոգոպեդական անբավարար գնահատման պայմաններում խոսքային որոշ խանգարումներ միանգամայն անտեսվում են արդի հանրակրթության մեջ: Սա խոսուն փաստ է սույն հիմնահարցի անբավարար մշակվածության և «սոցիալ-կրթական վտանգների» առաջացման վերաբերյալ, քանի որ նման բացթողումները սովորողներին, մանկավարժներին և նրանց ընտանիքներին հետագայում կանգնեցնում են սոցիալ-հոգեբանական, մանկավարժական լուրջ և անհաղթահարելի խոչընդոտների առջև:

**Հետազոտության երկրորդ գլխում** ներկայացված է ՏՄԱԿ-ներում ներդրված լոգոպեդական ծառայությունների իրականացման եվ խոսքային խանգարումների գնահատման գործնական դրվածքի հետազոտության արդյունքները: Ըստ դրանց՝ Ա. Հ. Ասլանյանը լայնածավալ ուսումնասիրություններ է անցկացրել դրված հիմնահարցի տեսանկյունից, որի ընթացքում արձանագրված փաստերի հիման վրա սահմանել է հետազոտության առջև ծառայած մասնակի խնդիրները: Արժանահավատ և կարևոր ենք համարում այն փաստը, որ կատարված ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսը լոգոպեդական գնահատման

գործընթացում առանձնացրել է ցցուն խնդիրներ, որոնք մատնանշում են այն հիմնական գործոնները, որոնք պատճառ են հանդիսանում երեխաներին լոգոպեդական համապատասխան միջամտություն չտրամադրելու համար: Դրանց շարքում նա առանձնացրել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման վերաբերյալ ստացվող տեղեկատվության անբավարար մշակվածության հանգամանքը, լոգոպեդական հետազոտության արդյունքում կազմված համապատասխան եզրակացությամբ երեխային հատկացվող լոգոպեդական աջակցության ժամաքանակը և այլ գործոններ:

Ըստ մեզ՝ ներկայացված արդյունքների հավաստիության մասին է խոսում հետազոտության կազմակերպման <<աշխարհագրությունը>>, որն ընդգրկում է Երևանի և << մի շարք մարզերի դպրոցներ և ՏՄԱԿ-ներ (Երևանի թիվ 1,2,3,4 ՏՄԱԿ-եր, Վանաձոր և Գորիս քաղաքների ՏՄԱԿ-ներ, Վանաձորի թիվ 1, 4, 7, 9, 24, Ձորագյուղի հիմնական դպրոցներ, Դեբեդի և Դսեղի միջնակարգ դպրոցներ): Սույն հետազոտության մեջ կարևոր ենք համարում նաև առանձնացնել այն փաստը, որ Ա . Հ . Ասլանյանին հաջողվել է գրագետ ձևով ներկայացնել ՖՄԴ գնահատման բաղադրիչների դերը լոգոպեդական գնահատման մոդել ձևավորելու համար, որտեղ նա ցույց է տվել վերջիններիս միջև առկա դինամիկ փոխազդեցությունը և դրանց ազդեցությունը լոգոպեդական գնահատման վրա: Ատենախոսը գտել է, որ միջամտություններ կատարելով մեկ բաղադրիչում՝ հնարավոր է կատարել փոփոխություններ նաև այլ բաղադրիչներում: Ըստ նրա՝ կարևոր է տվյալների հավաքագրել այդ բաղադրիչների վերաբերյալ և ուսումնասիրել դրանց միջև առկա պատճառահետևանքային կապերը: Սույն նկատառումն ըստ մեզ խիստ կարևոր է, քանի որ այս առումով որոշ խոսքային խանգարումների դեպքում (օրինակ ՄՌԿ-ի, խոսքի համակարգային խանգարումների և այլնի) լոգոպեդական գնահատման համար բոլոր բաղադրիչները կարևոր են . այդ թվում՝ խիստ որոշիչ են նաև միջավայրային և անհատական գործոնները, որոնք պարունակում են անձի կյանքին և ապրելակերպին վերաբերող ամբողջական տվյալներ:

Հետազոտական աշխատանքի երրորդ գլուխը, որը նվիրված է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում իրականացվող լոգոպեդական գնահատման մոդելավորման աշխատանքների արդյունավետության հիմնավորմանը՝ աչքի է ընկնում մասնագիտական հարուստ փորձի ընդհանրացումներով: Ա . Հ . Ասլանյանը մանկավարժական փորձարարությամբ հիմնավորել է լոգոպեդական գնահատման մոդելի, դրանում տեղ գտած մեթոդների և միջոցների արդյունավետությունը՝ ֆունկցիոնալ գնահատման բնութագրիչների և որակիչների վերանայման տեսանկյունից: Դրանցում հստակ նկարագրել է այն քայլերը, որոնք հարկավոր են վերոնշյալ գործընթացների կազմակերպման համար: Բարձր ենք գնահատում այն հանգամանքը, որ ատենախոսը լոգոպեդական գնահատման գործընթացի կառուցման ընթացքում հետևել է որոշակի սկզբունքների և ներկայացրել այն մեթոդաբանական հաջորդականությունը, որն ընկած է լոգոպեդական գնահատման հիմքում: Նա խոսքի հետազոտության ծածկագրերի վերլուծությունն իրականացրել է համադրման մեթոդով, որը թույլ է տվել գնահատել խոսքային խանգարումների հետևանքով առաջացած խնդիրները՝ դրանց տեսակի, աստիճանի և ծանրության տեսանկյունից և վեր հանել լոգոպեդական գնահատման առանձնահատկություններն ըստ խոսքային խանգարման դասակարգման՝ ՖՄԴ-ԵԵ-ի չափանիշներին համապատասխան: Սույն հետազոտության հիմնավորվածության տեսանկյունից հետաքրքրական և առանցքային ենք համարում այն, որ ատենախոսն իր կողմից առաջարկվող գնահատման համակարգում ծանրության աստիճանի որակիչը նշանակելիս հաշվի է առել օրգանիզմի ֆունկցիաների, մարմնի կառուցվածքի, ինչպես նաև կենսագործունեության և մասնակցության բաղադրիչները: Ինչպես որ ՖՄԴ-ի գլխավոր տարբերակում բոլոր ոլորտներում խնդրի ծանրության աստիճանը ցույց տվող համընդհանուր որակիչը կազմված է 0-4 թվային մեծության հինգ մակարդակից, (0- համապատասխանում է «խանգարում/խախտում չկա»,



«դժվարություն չկա» կամ «խոչընդոտող գործոն չկա. իսկ 4-ը՝ «խոր խանգարում/խախտում», «խոր դժվարություն» կամ «խոր խոչընդոտող գործոն» աստիճանին), այնպես էլ Ա.Հ. Ասլանյանի կողմից մոդելավորված լոգոպեդական գնահատման գործընթացներում այս հիմնական սկզբունքը պահպանվել է: Բացի այդ, ատենախոսի կողմից խիստ արժեքավոր մոտեցում է մշակվել առ այն, որ կատարված վերլուծությունները ներառել են ոչ միայն «Զգայարանների նպատակային օգտագործման /d110-d129/» ծածկագրերը, այլև այլ զգայարանների նպատակային օգտագործման ծածկագրեր, «Սովորելու հիմնական կարողության /d130-d159/» ծածկագրերից կոնկրետ նրանք, որոնք վերաբերում են հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման մեխանիզմներին (օրինակ՝ d130 <<Ընդօրինակելը>>, d 131 <<Առարկաների հետ գործողություններ կատարելու միջոցով սովորելը>> և այլն): Սույն հետազոտության շրջանակներում նոր քայլ ենք դիտարկել նաև այն, որ լոգոպեդական գնահատման մոդելավորման նպատակով սույն համակարգ է ինտեգրվել նաև <<b>>' (body function) ծածկագրի տակ ներկայացված այն ծածկագրերը, որոնք վերաբերում են խոսքային ֆունկցիաների, ձայնի արտաբերման հատկանիշների, հնչյունների, խոսքի տեմպի և ռիթմի ֆունկցիաների, կակազության, արագախոսության և դանդաղախոսության, խոսքի սահունության, ռիթմի, արագության և մեղեդայնության ֆունկցիաների գնահատմանը, որն ըստ ՖՄԴ չափորոշիչների՝ իրականացնում են ոչ թե լոգոպեդները, այլ բժիշկները:

Սույն սկզբունքով իրականացված հետազոտության տարեկան ուսուցողական մանկավարժական գիտափորձի կազմակերպման և անցկացման գործընթացում ատենախոսին հաջողվել է հստակ գնահատել երեխաների խոսքային խանգարումների աստիճանը, սահմանել նրանց կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի աստիճանը և լոգոպեդական ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը:

իրականացված հետազոտության արդյունքում ատենախոսը եզրակացրել է, որ ՏՄԱԿ-ներում ներդրված լոգոպեդական գնահատման աշխատանքների արդյունավետությունը էապես կախված է և՛ գնահատման մեթոդների ընտրությունից, և՛ կազմակերպվող գործընթացների մանկավարժական համապատասխան պայմանների առաջադրումից: Եվ, ըստ նրա, առաջադրվող լոգոպեդական գնահատման մոդելը արդի բժշկամանկավարժական համակարգային մոտեցումների բաղկացուցիչ և հատկանշական մաս է կազմում: Ա. Հ. Ասլանյանի կողմից առաջարկվող մոդելի էության հիմքում ընկած է այս համակազմի երեխաների խոսքի գնահատմանն ուղղված միջոցների ներդրման մանկավարժական պայմանների մշակումը և այդ գործընթացում ներգրավված անձանց՝ մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների ու ծնողների դերակատարման առանձնահատկությունների բացահայտումը: Ըստ մեզ՝ նման ընդհանրացումները լիովին բացահայտում են իրականացված հետազոտության նշանակությունն ու գիտական արժեքը: Աշխատանքի վերլուծության արդյունքում մեր կողմից բարձր է գնահատվել այն, որ ատենախոսը հստակ ներկայացրել է անհատական ուսումնական և զարգացման պլանով նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, որոնց արդյունավետությունը հաստատվել է նաև ՏՄԱԿ- ների մասնագետների կողմից:

Նշենք, որ ատենախոսն իրականացված հետազոտության արդյունքում վեր է հանել դպրոցներում և ՏՄԱԿ-ներում առկա մի շարք խոչընդոտներ, որոնց բախվում են մանկավարժներն ու մասնագետները՝ անբավարար գնահատման գործընթացների պատճառով: Դրանք, ըստ նրա, հիմնականում կապված են գնահատման համակարգի և դրանից բխող լոգոպեդական աշխատանքի անհամապատասխանության, մասնագիտական անձնակազմի ոչ բավարար քանակով, ծառայությունների մատուցման մանկավարժական անբավարար պայմաններով և անմշակ մոտեցումներով: Մասնագիտական տեսանկյունից կառուցողական և կարևոր ենք համարել, որ Ա. Հ. Ասլանյանի կողմից մշակված

լոգոպեդական գնահատման մոդելավորման արդյունքում բացահայտվել են հետազոտվողների ոչ միայն զուտ խոսքային խանգարումներն ու դրանց դրսևորումները, այլև հոգեկան զարգացման առանձնահատկությունները, ինչը նպաստել է ընդհանուր կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը, համընդհանուր ներառականության պայմաններում կազմակերպվող դասերի ընթացքում սովորողների ընդգրկվածությանը, դպրոցական հարմարվողականության մեխանիզմների խթանմանը:

Եվ այսպես՝ անդրադառնալով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում իրականացվող լոգոպեդական ծառայությունների իրականացման և խոսքային խանգարումների գնահատման արդյունավետության հարցերին՝ ատենախոսը հաստատող գիտափորձով ցույց է տվել, որ առաջինից չորրորդ դասարաններում սովորող երեխաների խոսքային խանգարումների լոգոպեդական գնահատման կարևոր առանձնահատկությունն այն է, որ գնահատման համակարգի լոգոպեդական մոդելավորումը հնարավորություն է տալիս իրականացնել ընթացիկ մշտադիտարկում՝ անձի ֆունկցիոնալության գնահատման և մատուցվող ծառայությունների համակարգում:

Ի վերջո, ներկայացված գիտահետազոտական աշխատանքը գործնական տեսանկյունից բարձրարժեք ենք համարում, քանի որ լոգոպեդական գնահատման մոդելավորման արդյունքում մշակված մեթոդական ուղեցույցը ներդրված է Երևանի թիվ 1, 2, 3, ՏՄԱԿ-ների լոգոպեդական պրակտիկայում, իսկ առաջարկված գործնական և ծրագրային նյութերը կիրառելի են խոսքային խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների շրջանում կազմակերպվող լոգոպեդական գնահատման գործընթացում:

Ա . Հ . Ասլանյանի կողմից ներկայացված լոգոպեդական գնահատման գործընթացի մոդելավորման անհրաժեշտությունը և դրա հիմքում մշակված գործիքակազմի արդյունավետությունը հիմնավորվել է փորձարարական

ճանապարհով՝ ուսուցանող գիտափորձի միջոցով: Այս փաստը բարձրացնում է ներկայացված հետազոտական աշխատանքի գիտական արժեքը:

Չնայած վերոհիշյալի՝ ներկայացված աշխատանքում տեղ են գտել որոշ բացթողումներ և անճշտություններ, որոնք ներկայացվել են **դիտողությունների ձևով:**

1. Ըստ մեզ՝ <<Ներածություն>> բաժնում հետազոտության հոգեբանամանկավարժական և սոցիոլոգիական մեթոդները կարելի էր առանձին կետով ներկայացնել (էջ՝ 9). [Վ.Ա. Յաղով՝ 2007, Վ.Ի. Դուդինա, Ե.Է. Սմիրնովա՝ 2014 և այլք]:
2. Պաշտպանության ներկայացվող դրույթներում հարկ էր, որ ձևակերպված լինել նաև առաջարկված լոգոպեդական գնահատման մոդելի շրաջանակներում մշակված գործիքակազմի արդյունավետության փորձարարական հիմնավորմանը վերաբերող դրույթ՝ մանավանդ, որ ատենախոսը 13-րդ էջում նշել է փաստացի փորձարարական նյութի առկայության և վերջինիս վիճակագրական մշակման մասին: Բացի այդ, բերված հետազոտության մեթոդները, ուսուցողական գիտափորձի առկայությունը ևս խոսում են այդ մասին (էջ՝ 32, 71-77):
3. Կարծում ենք <<Հիմնախնդրի դրվածքը լոգոպեդական գնահատման և ծառայությունների տրամադրման գործընթացում>> (1.4) ենթավերնագիրը առավել նպատակահարմար կլիներ արտացոլել երկրորդ գլխում, քանի որ հիմնախնդրի գործնական դրվածքին վերաբերող հարցերը արծարծված են այդ գլխում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Հրանտի Ասլանյանի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքը լիովին համապատասխանում է ատենախոսական աշխատանքի պահանջներին՝ վերջինիս կառուցվածքային, բովանդակային և մեթոդաբանական տեսանկյուններից: Ներկայացված տեսագործական նյութը ձևակերպված է պատշաճ գիտական և մասնագիտական լեզվով, որը համապատասխանում է ատենախոսական աշխատանքի շարադրման պահանջներին: Ներկայացված մեթոդաբանությունը, որն արտացոլված է գրականության ցանկում, լիովին արտացոլում է հետազոտված հիմնախնդիրը, իսկ հավելվածում տեղ գտած նյութերը մատնանշում են հետազոտության հիմքերը և գործնական ուղղվածությունը: Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսությունը ևս համապատասխանում են, իսկ պաշտպանության ներկայացված դրույթներն արտացոլված են Ա. Հ. Ասլանյանի կողմից հրատարակված հոդվածներում: Այն ավարտուն և ինքնուրույն հետազոտություն է, որը խոսում է ատենախոսի մասնագիտական գիտելիքների, գործնական պատրաստվածության, ինչպես նաև քննական մտածողության և ոլորտի հիմնախնդիրներին հաղորդակից լինելու փաստի մասին:


Այսպիսով, ելնելով ներկայացված հետազոտության արդիականությունից, նպատակից, խնդիրներից, վարկածից, պաշտպանության ներկայացվող դրույթներից և նրանից, որ՝

- Հայաստանում առաջին անգամ գիտականորեն հիմնավորվում է տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում ներդրվող խոսքի գնահատման լոգոպեդական մոդելի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը
- Լոգոպեդական գնահատման նոր մոդելը ֆունկցիոնալ հետազոտման տեսանկյունից հնարավորություն է ընձեռում իրականացնել խոսքային

խանգարումների գնահատում ԱՀԿ կողմից ընդունված Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (ՖՄԴ-ԵԵ)


- Խոսքի գնահատան նպատակով առաջադրված գործիքակազմը նպաստում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ համընդհանուր ներառականության պայմաններում հաստատում ենք, որ Ա.Հ. Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից՝ ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությանը ներկայացվող 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  
մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝



Լ. Հ. ՍԱՐԳՍԻԿՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոս մանկ.գիտ. թեկնածու, դոցենտ  
Լ.Հ.Սարատիկյանի ստորագրությունը հաստատում են  
Գիտ.քարտուղար՝ մանկ., գիտ., թեկ., դոցենտ՝



Մ. Մ. ԽՆՊԻՐՅԱՆ

02/15. 2024թ.